Ցանկանո՞ւմ եք համագործակցել մեզ հետ:

Թույլ տվեք մեզ օգնել Ձեզ և փոփոխություն առաջացնել Ձեր տեղական համայնքում, քանի որ մենք միասին ենք աշխատում առանց խոչընդոտների Կալիֆոռնիա կառուցելու ուղղությամբ: CCDA-ն օգտագործում է բոլոր ռազմավարական գործընկերների համատեղ ջանքերը, որպեսզի արդյունավետ կերպով խթանի մատչելիության պայմանները բոլորի համար:

Արդյոք Ձեր կազմակերպության անդամներն ունե՞ն ընդհանուր նպատակներ:

Կապ հաստատե՛ք մեզ հետ այսօր:

Կապվե՛ք մեզ հետ:

(916) 319-9974

400 R Street, Suite 310
Sacramento, CA 95811

ccda@dgs.ca.gov

www.dgs.ca.gov/CCDA

CCDA | California Commission on Disability Access

Մատչելի, առանց խոչընդոտների Կալիֆոռնիա

Ներառական և հավասար հնարավորություններ բոլորի՛ համար:

Մեր առաքելությունը:

Խթանել հաշմանդամություն ունեցողների պայմանների մատչելիությունը Կալիֆոռնիայում՝ կրթության, երկխոսության և շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով:

Մեր մասին:

Հիմնադրվելով 2009 թվականին Հաշմանդամություն ունեցող անձանց պայմանների մատչելիության հարցերով Կալիֆոռնիայի հանձնաժողովը (CCDA) հանդես է գալիս որպես հանրության համար տեղեկատվության աղբյուր և որպես հետազոտական կառույց՝ Կալիֆոռնիայի բիզնես հաստատություններում հավաքելով և վերլուծելով ֆիզիկական պայմանների և կայքէջերի մատչելիությանն առնչվող բոլոր ենթադրյալ խախտումների վերաբերյալ իրավական բողոքները:

Ո՞ւմ ենք մենք ծառայում:

CCDA-ը ծառայում է հաշմանդամություն ունեցող անձանց համայնքին, բիզնեսներին, շինարարական մասնագետներին, իրավական համայնքին և տեղական կառավարություններին:

Հավատում ենք, որ աշխատելով համատեղ այն համայնքի հետ, որոնց մենք ծառայում ենք, կարող ենք կրճատել բիզնես հաստատություններում առկա պայմանների մատչելիության համապատասխանության խատումները՝ տրամադրելով ռեսուրսներ և գործիքներ:

Ո՞րն է մեր գործը:

Մենք հավաքում ենք մատչելիության խախտումների վերաբերյալ տվյալներ՝ սահմանելու հանրության կրթության իրազեկման հնարավորությունները և զարգացնելու մատչելիության գործիքներ, որոնցից կարող են օգտվել բիզնես հաստատությունները, շինարարական մասնագետները և շահագրգիռ կողմերը:

Մենք համագործակցում ենք նահանգային և տեղական կառավարությունների հետ, որպեսզի իրականացնենք մատչելիության ծրագրեր և նվազագույնի հասցնենք պայմանների մատչելիության խորընդոտները իրենց համայնքներում գործող բիզնես հաստատություններում:

Ներգրավվե՛ք:

CCDA-ը պարբերաբար հյուրընկալում է պայմանների մատչելիության վերաբերյալ հանրային հանդիպումներ, ֆորումներ և իրազեկման միջոցառումներ: Այցելե՛ք մեր որևէ հանրային միջոցառմանը, որպեսզի տեղեկանաք մեր ամենավերջին գործողությունների մասին: